Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Խոստովանում եմ, շատ էլ մեծ հաճույքով չէր, որ իջա մեքենայից, երբ հասանք Դավալու, Հունաստանից եկած գաղթականների վայրը:

Գաղթականներին այցելել—նշանակում է այցելել նեղված, ջղայնացած և նույնքան, բնականաբար, դժվար հաղթահարելի պայմաններում մտահոգված մի բազմության:

Մենք դուրս եկանք «փողոցը», որի երկարությամբ ձգվում են երկարավուն կացարաններ, որտեղ տեղավորված է գաղթականների մեծագույն մասը:

Վրանները, որոնց լուսանկարը տեսել էինք «Խորհրդային Հայաստանում», չկան այլևս: Երկու երեք վրան է մնացել միայն, շուտով երևի նրանք էլ կվերանան, և «վրանաբնակությունը» կվերջանա:

Գաղթականները ձեռք են զարկել Դավալվի խարխուլ տների նորոգման: Այդ պետք է նրանց ժամանակավոր բնակության համար: Նրանք պետք է ցրվեն չորս գյուղում, պիտի ստանան իրենց անհրաժեշտ հողը և այնտեղ հիմնեն մշտական հայրենիք:

Ինչպե՞ս են գաղթականներն իրենց նոր հայրենիքում. . .

Չկա ավելի քան դժվար հարց, որին կարելի լիներ պատասխանել:

Ի՞նչ եք զգացել, երբ հին սենյակից տեղափոխվել եք նոր սենյակ, սենյակ, թեկուզ ամենամեծ հարմարություններով: Ինչ-որ անախորժություն՝ անսովորությունից:

Բայց այստեղ մարդիկ սենյակ չէ որ փոխել են, այլհայրենիքը: Գաղթականությունն ինքն արդեն մի աննորմալություն է, ինքնին ապացույց է անգոհացուցիչ վիճակի:

Լավ գաղթականություն չկա: Նրանք պետք է դադարեն գաղթական լինելուց:

Եվ ահա այդ աշխատանքն է, որ կատարվում է այժմ Հողժողկոմատի կողմից — այս է ամենից կարևորը:

Նախքան իրենց հետ տեսնվելը՝ անցանք «հասարակական» հիմնարկությունները. . . ամայի դաշտի վրա:

Ահա մի դեղատուն-ամբուլատորիա, կողքին բժշկի սենյակը: Հողե հատակ, ծղոտե տանիք, ցեխի պատ— մի փոքրիկ, մաքուր տուփ: Բայց մենք որոնում էինք հանձնաժողովին: Բուժակի ցույց տված ուղղությամբ գնացինք մի տուն, որի գլխին կարմիր դրոշակ է ծածանվում:

Ճամփին պատահեց նաև բժիշկը, որ գնում էր իր բնակարանը:

Մտանք ներս: Այնտեղ նստած էին մի քանի երիտասարդ և ինչ-որ չեկեր էին հաշվում: Արարատյան և Արևմտյան բարբառներն ամեն վայրկյան իրար էին զարնվում— բայց հասկանում էին իրար:

Գաղթականները, գրեթե բոլորը, այսինքն նրանք, որ մնացել են Դավալվում՝ որակյալ երկրագործներ են. բամբակի, թութունի, խաշխաշի և շերամի մասնագետներ: Նաև խոշոր տոկոս են կազմում արհեստավորները. հյուսն, դերձակ, կոշկակար և այլն:

Նրանք բոլորն սպասում են հողերի որակման, գյուղերի հատակագծման և սահմանների որոշման:

Եղանակների տաքանալու հետ այդ աշխատանքներն ավարտված կլինեն, և գաղթականներն իրենց այս ժամանակավոր և «վերջին» գաղթավայրից կանցնեն իրենց գյուղերը՝ Նոր Սեբաստիա, Արմաշավան, Պահակ և չորրորդը չեմ հիշում. նախկին Արազդայան, Յայջա, Ավշար և Սմո գյուղերը:

Գաղթականների մի մասը (առևտրականները և «ձեռներեց ոմանք») հեռացել են դեպի քաղաքները: Ոմանք գնում են իրենց «պարագաների» մոտ՝ Սուխում: Մի մասն էլ գնացել է մոտակա գյուղերը ձմեռելու: Սրանց հողաբաժինը կպահվի: Մի երկուառևտրական արդեն խանութ են բաց արել Վեդիում՝ ճամփի վրա: Գաղթականներն այժմ մաքրում են (իհարկե, օրավարձով) ջրանցքն իրենց հողերը ոռոգելու համար: Պիտի ջրվի 300 դեսյատին: Ջրանցքի վրա աշխատող բանվորները, չնայած որ օրավարձով են բանում, բայց երբ հիվանդանում են, 12 օր, օրական մի ռուբլի են ստանում: Կանայք բամբակ են մաքրում մոտակա գյուղերում:

Եկավ բժիշկը, որ ուրախությամբ ընկերացավ մեզ՝ գաղթավայրը դիտելու:

Գաղթականների համար շինվում է մի հիվանդանոց: Բայց առայժմ Կարմիր խաչը բացել է մի ամբուլատորիա, նաև ժամանակավոր ծննդաբերության տուն: Առայժմ գործում են մի բժիշկ, մի քույր, մի սանիտար և մի բուժակ:

Հիվանդանոցը շուտով կավարտվի, և Կարմիր խաչն արդեն բոլոր սարքավորումն ուղարկել է տեղս:

Այնուհետև այցելեցինք կոոպերատիվ փուռը, որտեղ օրական 9—10 փութ հաց է թխվում: Փուռը հիմնել է հանձնաժողովը և տվել տեղական կոոպերատիվին:

Ահա և դպրոցը. . . Հարյուր աշակերտ է հաճախում. ուսուցիչն իրենցից է: Երկար նստարաններ, հողե պատին հենած գրատախտակ. . . բայց վնաս չունի, ծնողների մեծագույն մասն անգրագետ է (80 տոկոս). կանայք ավելի գրագետ են:

Այցելեցինք նաև բաղնիքը: Այդ մի փոքրիկ, երկարավուն շենք է, որ չէ ավարտված: Դժվարացնողը ջրհան մեքենան է:

Բժիշկն ասում էր, որ գաղթականներն անհամեմատ մաքրասեր են, բայց բաղնիքի ուշացումը շատ անհարմար հանգամանք է. . .

Սուր-վարակիչ հիվանդություններ չկան: Գաղթականների մեջ կան մալարիկներ, որ հիվանդությունը բերել են Հունաստանի կղզիներից նաև տրախոմա:

Ծննդյան 7 դեպք է եղել, ամուսնության՝ 10 և մահացության՝ 5:

Ահա և կացարանները: Հիմա կտեսնենք «իրենց»: Մոտենում ենք դռներին, և հենց նույն վայրկյանին մի գեղեցիկ գեղջկուհիդուրս գալով դռնից, մեզ տեսնելով, աչքերը գետնին՝ դուռը բաց է անում և ճամփա տալով մեզ, ինքը հեռանում է:

Մտնում ենք ներս:

Երեք շարք տախտակամածներ ձգվում են պատերի տակով և մեջտեղով, որոնց վրա դրված են նրանց իրերն ու անկողինները: Անկողինների ծալքերը և արկղների պատնեշները կազմում են «առանձին սենյակի» սահմանները, որտեղ տեղավորված են ընտանիքները:

Շենքը հապճեպ է, ժամանակավոր, ուստի և, հասկանալի է, որ շատ էլ հարմարներից չէ: Գաղթականները մինչև այդ ապրում էին վրաններում, բայց ցրտից պատսպարվելու համար առայժմ հարմարվել են այդ հանրակացարաններում:

Կերակրի ամաններ են դրված այդ վառարանների վրա, որ խաղաղ խլթխլթում են: Ամեն հասակի սեռի մարդիկ նստած պառկած են, կամ ժողովված այստեղ, այնտեղ, հաճախ վառարանների մոտ, ու մտմտում են, ասում, խոսում: Կարմրաթուշիկ խնձորների նմանող պստլիկ աղջիկ-տղաները վժվժում են ու ոտի տակ ընկնում: Ահա մի կին խնամքով սրբեց իր երեխաների քիթը և ականջներին փսփսում է, որ ճամփա տան մեզ: Ինձ զարմացրեց մաքրությունը, հավաք, կոկիկ անկողինները ու արկղները և կանոնավոր դասավորությունը: Հավերի վանդակներ են երևում տախտակամածների տակ: Աքլորներ են շրջագայում հավերի հետ, նրանք էլ են սպասում գյուղերի հատակագծման և հողերի սահմանավորման: Ահա մի խումբ պստլիկ երեխաներ կշեռք են շինել և «խանութ» են խաղում

տախտակամածի տակ: Մի հասակավոր մարդ բերանսիվար պառկած խիստ հոգածու դեմքով և ճարտար մատներով մի երկու բուռ կորկոտն է մաքրում գունավոր թաշկինակի մեջ: Կոշկակարը դրել է իր կոճղը և կողքին նստել սանդալներ է կարում. շատ գեղեցիկ բաներ: Դերձակը փռել է մի կտոր և չափում է. պիտի ձևի: Եվ ինչպես՝ երբեմն շուկայում, այնպես էլ այժմ՝ հարևան արհեստավորները կամ պարապորդներ հավաքվել են դերձակի գլխին և դիտում են, միաժամանակ խոսում «առօրյա գործերի» մասին:

Մի երիտասարդ շատ մեղմ և ճարտարորեն մանդոլ է նվագում: Մոտենում ենք նրան, կանգ է առնում:

— Օր մըն ալ հայերեն կը սովորենք, հայերեն ալ կը նվագենք,— ասում է կողքին նստած մի ուրիշ երիտասարդ:

Ահա մի ուրիշ երիտասարդ, թիկն տված մի սնդուկի՝ ինչ-որ թղթեր է փռել շուրջը և բաներ է գրում:

— Ընկեր վաճառական, բարև,— դիմում է նրան բժիշկը:

— Բանն ինչու՞մն է,— հարցնում եմ:

— Ռուսերեն է սովորում:

— Ու՞ր պիտի գնա, արդյոք, Ռոստո՞վ, թե Մոսկվա:

Մոտենում եմ մի խումբ կանանց:

— Բարև ձեզ:

Բարևում են:

— Վիճակնիդ ինչպե՞ս է,— հրահրում եմ ես:

Մի արծվաքիթ հասակավոր կին շեշտ նայում է աչքերիս.

— Վիճակնիս գեշ է, դե, յապան ենք: Մայրիկ չունենք, հայրիկ չունենք, ծանոթ չունենք: Աս մեր տուները ե՞րբ պիտի երթանք: Ես ալ գիտեի թե Հայաստան գամ նե՝ կոնյակ պիտի խմեմ, շերբեթ պիտի խմեմ,— ու՞ր է, յավրում: Ամուսինս քաղաքն է, ուչունճը հիվանդանոցը, ե՞րբ պիտի աղեկնա, յավրում. . .

— Էշակ չունենք, ձի չունենք նե՝ դուզը երթանք, փայտ բերենք, «զոպալըղ» փայտ ունինք նե՝ ան ալ կը վառենք, աս ձմեռը պիտի վերջանա, յավրում:

— Որտեղացի՞ եք:

— Մենք զաթը ղարաբաղլի ենք:

— Ի՞նչ Ղարաբաղ:

— Աս, ձեր Ղարաբաղը: Հինգ տարեկան ատեննիս, պապանիս մեզի առեր տարեր է Տաճկաստան. . .

Ես սիրտ եմ տալիս կնոջը, ասելով, որ գարնան կը գնան «տուն» և մի երկու տարի հետո «զոպալըղ» փայտ էլ կը լինի, էշակ էլ, կոնյակ էլ և հետո ծանոթ-բարեկամ էլ: Շատը գնաց՝ քիչը մնաց:

— Համբերեցեք:

— Է, չի համբերենք՝ ի՞նչ պիտի ընենք. մեր հայրենիքը ալ աս է. ուրիշ տեղ երթալիք չունենք:

Մոտենում եմ այլ խմբի: Մի խոշոր աչքերով տղամարդ,խիստ կարծր դեմքը մոտեցնում է դեմքիս: Մի քիչ մութն է սյունի տակ:

— Բարև, բարեկամ, ի՞նչ կընեք, ինչպե՞ս եք:

— Շնորհակալ ենք. առայժմ օրապահիկով կապրենք:

— Գո՞հ եք ձեր վիճակեն:

— Առայժմ սապես ըլլալու է. օր աշխատենք՝ օր կուտենք. վնաս չունի, ժամանակին կաղեկնանք: Մերն է, մեր երկիրն է, մենք պիտի շինենք:

Եվ այսպես անվերջ: Ամենքը միևնույն կերպ էին պատկերացնում դրությունը:

— Օտարին հույս չկա,— ասում էր մի հյուսն, նորաշեն հիվանդանոցի պատերն իր ուրագի ձայներով զվարթացնելով:

Եվ ժպտում էր:

— Լավն է՝ մերն է, գեշն է՝ մերն է,— ասում էին ամեն կողմից:

— Իսկապե՞ս, գոհ եք ձեր վիճակից,— պնդում էի ես ամեն անգամ.

Մի հյուսն ինձ ասաց.

— Հունաստան լավ տնկարաններ կային և լավ գործ, բայց ամեն տեղ հալածանք էր և անհաստատ: Շարունակ քանդվում էինք: Հիմի մի անգամ կը շինենք մեր տունը, և սա էլ երբեք չի քանդվի:

— Կարո՞ղ եք:

— Ինչո՞ւ չպիտի կարողանանք: Արհեստ գիտենք, երկրագործություն գիտենք:

Երբ հեռանում էինք, մի կնիկ վազելով եկավ բժշկի մոտ:

— Ի՞նչ կա:

— Մեր աղջիկը, որ գիշերս պառկավ ու մանչ բերեց՝ քիչիկ մը ավելի փայտ է պետք:

— Փա՛յտ: Շատ լավ, շատ լավ,— ասաց բժիշկը և կարգադրեց, որ «քիչիկ մը ավելի փայտ տան բնիկ նորածնին»:

Ի միջի այլոց բժշկից շատ գոհ էին կանայք:

— Մեզի շատ կմխիթարե մարդը:

Մենք շնորհակալություն հայտնելով բժշկին ու մյուսներին՝ ճամփա ընկանք Երևան: